ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 22

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով,Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել ավագանու թիվ 8 նիստի օրակարգը
1.Նոր ուղի համայնքի տեղական տուրքերի՝ և վճարների 2016թ դրույքաչափեր սահմանելու մասին:
2.2015թ վարչական բյուջեի ծախսային մասում հոդվածային փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 23

ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածի պահանջներով,Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է՝

Նոր ուղի համայնքում 2016թ համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝
Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝
1.Հիմնական օբյեկտների համար՝
1/Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում ՝այգեգործական /ամառանոցային/,տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ
2/Սույն կետի <ա> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա/201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 դրամ
բ/501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ
գ/ 1001 և ավելի 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ
դ/3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ:
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
3/ Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ
4/ 20 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համաը 2500 դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար 1500 դրամ:
3.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
1-ին,2-րդ,3-րդ կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը
4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել
1/Ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝5000 դրամ:
2/Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝5000 դրամ:
5/Համայնքի վարչական տարածքում՝
1/Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար,սահմանել տեղական տուրք,յուրաքանչյուր օրվա քմ համար 100 դրամ:
2/Խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:
6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ:
7.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություններ իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 10000 դրամ:
8.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ:
9.Համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ:
10.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար ՝մասնակիցներից վճար 2000 դրամ:
11.ա/Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքները իրականացնելու համար տեղական վճար սահմանել,յուրաքանչյուր բնակչից ամսվա համար 120 դրամ:
բ/ Համայնքի վարչական տարածքում գործող խանութների համար ամսական տեղական վճար սահմանել 400 դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

3. ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 24

2015Թ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է՝

Կատարել հոդվածային փոփոխություն հետևյալ կերպ

1.Պակասեցնել վարչական բյուջեի ծախսային մասի օրենսդիր և գործադիր կառավարման մարմնի պահպանում 4111 աշխատողների աշխատավարձեր և հավելավճար 1.1.1.51 հոդվածից 722051 դրամ:Ճշտված պլան սահմանելով 8835949 դրամ
2.Պակասեցնել վարչական բյուջեի 4891 պահուստային ֆոնդից 36700 դրամ:
Ճշտված պլան սահմանելով 986800 դրամ:
3.Ավելացնել 35000 դրամ կառավարման մարմնի պահպանում 4234 1.1.1.51 տեղեկատվական ծառայություններ հոդվածին:
Ճշտված պլան սահմանելով 215000 դրամ:
4.Ավելացնել 723751 դրամ կառավարման մարմնի պահպանում 4112 1.1.1.51 պարգևատրում հոդվածին:
Ճշտված պլան սահմանելով 723751 դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

3. ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ